ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Արդարադատության ակադեմիա»

պետական ոչ առևտրային կազմակերպության

2016 թվականի գործունեության

ԵՐԵՎԱՆ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3
II. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ 5
1. Վերապատրաստում և հատուկ ուսուցում 5
2. Մասնագիտական պատրաստում 7
III. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ 8
1. Վերապատրաստում 8
2. Մասնագիտական պատրաստում 11
3. Հատուկ ուսուցում 12
IV. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ 13
1. Մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և հատուկ ուսուցման տարեկան ծրագրերի նախագծերի մշակում 13
2. Առարկայական ծրագրերի մշակում 14
3. Ընթացիկ այլ աշխատանքներ 21
V. ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ 23
1. Ընդհանուր տեղեկություններ 23
2. Հեռաուսուցման դասընթացներ 25
3. Ընդհանրացված ամփոփում 28
VI. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 29
1. Եկամուտներ 29
2. Ծախսեր 30
VII. ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ 32

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ դատական օրենսգրքով, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, «Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության մասին» ՀՀ օրենքով, «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ակադեմիա) կանոնադրությամբ, Ակադեմիայի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշումներով և այլ իրավական ակտերով, Ակադեմիան հաշվետու ժամանակահատվածում իր գործունեության նպատակների ու խնդիրների կենսագործման ուղղությամբ՝

1) կազմակերպել և անցկացրել է որակավորման ստուգման արդյունքներով դատավորների, դատախազների և ՀՀ քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
2) կազմակերպել և անցկացրել է դատավորների, դատախազների, ՀՀ քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության քննիչների, Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած և դատավորների թեկնածությունների ցուցակում գտնվող անձանց վերապատրաստում.
3) կազմակերպել և անցկացրել է դատական ծառայողների, ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողների, ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստում.
4) կազմակերպել է դատավորների, դատախազների և դատական կարգադրիչների հատուկ ուսուցում՝ հատուկ միջոցների և հրազենի գործադրման ունակություններն ուսուցանելու նպատակով.
5) կնքել է պայմանագրեր և արդյունավետորեն համագործակցել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա իրավաբանական ու ֆիզիկական անձանց, միջազգային կազմակերպությունների հետ.

6) մշակել է ուսումնամեթոդական նյութեր՝ Օրենքով նախատեսված կրթական ծրագրերի իրականացման համար:

2016 թվականի ընթացքում գործունեության տարբեր բնագավառներում իրականացված բազմաթիվ միջոցառումներն ու ծրագրերը կոչված են եղել խթանելու Ակադեմիայի առաջընթացը, ապահովելու ուսումնական գործընթացի բարելավումն ու զարգացումը և կրթության որակի բարձրացումը:

Քայլեր են ձեռնարկվել նաև ժամանակակից նոր սարքավորումներ ձեռք բերելու, նյութատեխնիկական բազան, ենթակառուցվածքները բարելավելու, ինչպես նաև հասարակության հետ կապերը զարգացնելու, Ակադեմիայի վարկանիշն ու հեղինակությունը բարձրացնելու ուղղությամբ: Կատարվել են նաև բարեկարգման ու վերանորոգման ծավալուն աշխատանքներ և այլն:

***

Ստորև հանգամանորեն ներկայացվում է Ակադեմիայի 2016 թվականի գործունեությունը՝ ըստ կառուցվածքային ստորաբաժանումների և ոլորտների:

II. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում առկա ուսուցման վարչության դատարանների հետ կապերի բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

1) դատավորների և Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստում.
2) դատավորների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
3) դատական ծառայողների վերապատրաստում.
4) դատական կարգադրիչների վերապատրաստում.
5) դատավորների և դատական կարգադրիչների հատուկ ուսուցում:

1. Վերապատրաստում և հատուկ ուսուցում

• **Դատավորների վերապատրաստում:** Խորհրդի 2016թ. փետրվարի 15-ի թիվ 54-Ա որոշմամբ հաստատված «Դատավորների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է դատավորների և Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստում՝ 2 հատվածով, 16 խմբով: Խմբերում ընդգրկվել է 14-25 դատավոր: Ծրագիրն իրականացվել է ուսուցման առկա և հեռավար ձևերով: Հարակից մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրված դասընթացները կազմակերպվել են ուսուցման հեռավար, իսկ ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրկվածները՝ առկա ձևով:

Առկա ուսուցման ձևով վերապատրաստումն իրականացվել է սեպտեմբերի 5-ից դեկտեմբերի 16-ը: Վարչական մասնագիտացմամբ դատավորների մեկ խումբ մասնակցել է վերապատրաստման դասընթացներին մայիսի 23-ից 27-ը:

Հայտով ներկայացվել է ընդամենը 262 ունկնդիր: Նրանցից վերապատրաստում են անցել 241-ը, որոնցից 214-ը՝ ՀՀ, 21-ը՝ ԼՂՀ դատավորներ և 6-ը՝ Ակադե-

միայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք:

• **Դատավորների հատուկ ուսուցում:** 2016թ. սեպտեմբերի 10-ին և 17-ին, երկու խմբով, իրականացվել է դատավորների հատուկ ուսուցում: Դասընթացների տևողությունը կազմել է 10-ական ակադեմիական ժամ:

Հայտով ներկայացվել է 36 դատավոր, որոնցից հատուկ ուսուցմանը մասնակցել են 15-ը:

• **Դատական ծառայողների վերապատրաստում:** Խորհրդի 2016թ. փետրվարի 15-ի թիվ 54-Ա որոշմամբ հաստատված «Դատական ծառայողների վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է դատական ծառայողների վերապատրաստում՝ 1 հատվածով, 23 խմբով: Վերապատրաստման դասընթացներին մասնակցել են **ընդամենը 480 դատական ծառայողներ, որոնցից 12-ը՝ ՄԻՊ աշխատակազմից, 13-ը՝ ԼՂՀ-ից:** Խմբերում ընդգրկվել է 13-28 դատական ծառայող: Վերապատրաստումն իրականացվել է ապրիլի 6-ից սեպտեմբերի 26-ը: Ծրագիրն իրականացվել է առկա ուսուցման ձևով: Յուրաքանչյուր խմբում ընդգրկված ունկնդիրները դասընթացի ավարտին հանձնել են քննություն՝ բոլորը գնահատվել են դրական:

Դատական ծառայողների ուսումնառության տևողությունը՝ իրավաբանական մասնագիտական գործառույթներ իրականացնող դատական ծառայողների համար կազմել է 38, ղեկավար պաշտոն զբաղեցնող դատական ծառայողների համար՝ 34, ուսուցման ծրագրի 5-7 կետերում նշված մասնագիտական գործառույթ իրականացնող դատական ծառայողների համար՝ 24, դատական նիստերի քարտուղարների համար՝ 20 և Դատական դեպարտամենտի այլ մասնագիտական գործառույթներ իրականացնող դատական ծառայողների համար՝ 14 ակադեմիական ժամ:

• **Դատական կարգադրիչների վերապատրաստում և հատուկ ուսուցում:** Խորհրդի 2016թ. փետրվարի 15-ի թիվ 54-Ա որոշմամբ հաստատված «Դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է դատական կարգադրիչների վերապատրաստում և հատուկ ուսուցում՝ 40-ական (վերապատրաստումը՝ 24, հատուկ ուսուցումը՝ 16) ակադեմիական ժամով: Դատական կարգադրիչների վերապատրաստման և հատուկ ուսուցման դասընթացները

կայացել են մայիսի 10-ից հուլիսի 7-ը: Դրանց մասնակցել են **195 դատական կարգադրիչներ:** Դասընթացները կազմակերպվել են 10 խմբով, յուրաքանչյուրում՝ 19-23 դատական կարգադրիչներ: Յուրաքանչյուր խմբում ընդգրկված ունկնդիրները դասընթացի ավարտին հանձնել են քննություն՝ բոլորը գնահատվել են դրական:

2. Մասնագիտական պատրաստում

• **Դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձինք:** Խորհրդի 2015թ. հուլիսի 24-ի թիվ 40-Ա որոշմամբ հաստատված «Դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրով» սահմանված կարգով մասնագիտական պատրաստում է անցել դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված **9 անձ, որոնցից 7-ը՝ քաղաքացիական, 2-ը՝ վարչական մասնագիտացմամբ:**

– **Քաղաքացիական մասնագիտացմամբ** ունկնդիրների ուսուցումը սկսվել է 2015թ. օգոստոսի 31-ին և ավարտվել 2016թ. հունիսի 17-ին: Ուսումնառության ժամկետի տևողությունը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է 1230 ակադեմիական ժամ, որից 400-ը կազմել է դասընթացների, 40-ը՝ քննաշրջանի, 770-ը՝ փորձաշրջանի և 20-ը՝ հրավիրյալ մասնագետների դասախոսությունների ժամաքանակը:

– **Վարչական մասնագիտացմամբ** ունկնդիրների ուսուցումը սկսվել է 2015թ. օգոստոսի 31-ին և ավարտվել 2016թ. հունիսի 17-ին: Ուսումնառության ժամկետի տևողությունը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է 1230 ակադեմիական ժամ, որից 330-ը կազմել է դասընթացների (ներառյալ՝ 40 ակադեմիական ժամ քննաշրջանի), 880-ը՝ փորձաշրջանի, 20-ը՝ հրավիրյալ մասնագետների դասախոսությունների ժամաքանակը:

Ընդանուր առմամբ կազմակերպվել է 940 ունկնդիրների մասնագիտական պատրաստում, վերապատրաստում կամ հատուկ ուսուցում:

III. ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում առկա ուսուցման վարչության դատախազության հետ կապերի բաժինն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

1) դատախազների տարեկան վերապատրաստում.
2) ՀՀ քննչական կոմիտեի քննիչների վերապատրաստում.
3) ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վերապատրաստում.
4) ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստում.
5) ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների վերապատրաստում.
6) դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
7) քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում.
8) դատախազների հատուկ ուսուցում:

1. Վերապատրաստում

• **Դատախազների վերապատրաստում:** Խորհրդի 2016թ. փետրվարի 15-ի թիվ 55-Ա որոշմամբ հաստատված «Դատախազների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա դատախազների վերապատրաստումն իրականացվել է ուսուցման առկա և հեռավար ձևերով: Հարակից մասնագիտական դասընթացները կազմակերպվել են հեռավար, իսկ ընդհանուր և հատուկ մասնագիտականները՝ առկա ձևով:

Դատախազների ընդհանուր և հատուկ մասնագիտական դասընթացների ուսումնառության ժամկետի տևողությունը կազմել է 40-ական ակադեմիական ժամ:

Դասընթացները կազմակերպվել են հետևյալ ժամանակացույցին համապատասխան.

ա) ընդհանուր մասնագիտական դասընթացներ՝ 05.09-24.09.2016թ.

բ) հատուկ մասնագիտական դասընթացներ՝ 05.09-09.12.2016թ.:

Խմբերում ընդգրկվել են 14-32 դատախազներ:

Հայտով ներկայացվել են 308՝ ՀՀ, 13՝ ԼՂՀ դատախազներ: Վերապատրաստում անցել են.

ա) ընդհանուր մասնագիտական դասընթացներով՝ 54 ՀՀ դատախազներ,

բ) հատուկ մասնագիտական դասընթացներով՝ 289 ՀՀ և 13 ԼՂՀ դատախազներ:

• **ՀՀ քննչական կոմիտեի քննիչների վերապատրաստում:** ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի որոշմամբ հաստատված «Քննիչների տարեկան վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա քննիչների վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով:

Ուսուցման ծրագրի համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար կազմի ուսումնառության ժամկետի տևողությունը կազմել է 24, իսկ քննիչներինը՝ 40 ակադեմիական ժամ:

Դասընթացները կազմակերպվել են հետևյալ ժամանակացույցին համապատասխան.

ա) ղեկավար պաշտոններ զբաղեցնող քննիչներ՝ 11.05-11.11.2016թ.

բ) քննիչներ՝ 04.04-04.11-2016թ.:

Խմբերում ընդգրկվել են 17-22 քննիչներ:

Հայտով ներկայացվել են 280 քննիչներ և 54 ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչներ: Վերապատրաստում անցել են 265 քննիչներ և 54 ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչներ:

• **ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վերապատրաստում:** ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի «Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության քննիչների՝ 2016 թվականի վերապատրաստման ուսուցման ծրագիրը, խմբերը և ժամանակացույցը հաստատելու մասին» հրամանի հիման վրա ՀՔԾ քննիչների վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով:

Հատուկ քննչական ծառայության քննիչների ուսումնառության ժամկետի տևողությունը կազմել է 40 ակադեմիական ժամ: Դասընթացներն անցկացվել են յուրաքանչյուր շաբաթ օր՝ 12.03-22.10-2016թ.:

Հայտով ներկայացվել են ՀՔԾ 21 քննիչներ, որոնք բոլորն անցել են վերապատրաստում:

• **Դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստում:** Խորհրդի 2016թ. փետրվարի 15-ի թիվ 55-Ա որոշմամբ հաստատված «Դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով՝ 1-ական շաբաթ ժամկետով, 2 խմբով, և ավարտվել վերապատրաստման արդյունքների գնահատմամբ:

Խմբերում ընդգրկվել են 21-23 պետական ծառայողներ: Վերապատրաստումն իրականացվել է ապրիլի 5-ից 18-ը:

Հայտով ներկայացվել են դատախազության աշխատակազմում 44 պետական ծառայողներ, որոնք բոլորն անցել են վերապատրաստում:

• **ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների վերապատրաստում:** ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի որոշմամբ հաստատված «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների վերապատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա վերապատրաստումն իրականացվել է առկա ուսուցման ձևով՝ 1-ական շաբաթ ժամկետով, 3 խմբով, և ավարտվել վերապատրաստման արդյունքների գնահատմամբ:

Խմբերում ընդգրկվել են 18-20 պետական ծառայողներ:

Վերապատրաստումն իրականացվել է հոկտեմբերի 4-ից 24-ը:

Հայտով ներկայացվել են ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի 58 պետական ծառայողներ, որոնցից վերապատրաստումն անցել են 55-ը:

2. Մասնագիտական պատրաստում

• **Դատախազների թեկնածություններ ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում:** Խորհրդի 2016թ. փետրվարի 15-ի թիվ 55-Ա որոշմամբ հաստատված «Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է մասնագիտական պատրաստում:

Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ուսումնառությունն անցկացվել է ուսուցման 5 հատվածով: Ուսումնառության տևողությունը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է 1240 ակադեմիական ժամ, որից 380-ը կազմել է դասընթացների, 40-ը՝ քննաշրջանի, 800-ը՝ փորձաշրջանի, 20-ը՝ հրավիրյալ մասնագետների դասախոսությունների ժամաքանակը:

Դասընթացները կազմակերպվել են 1 խմբով՝ 2016 թվականի մարտի 1-ից դեկտեմբերի 16-ը:

Ուսումնառությանը մասնակցել է դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 12 անձ (այդ թվում, 3-ը՝ ԼՂՀ-ից), որոնցից 1-ը, ՀՀ գլխավոր դատախազի 2016թ. հունիսի 14-ի հրամանով, հանվել է դատախազների թեկնածությունների ցուցակից:

Հայտով ներկայացվել է դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 12 անձ, որոնցից մասնագիտական պատրաստումն ավարտել են 9-ը, այդ թվում, 1-ը՝ ԼՂՀ-ից:

• **Քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում:** ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի որոշմամբ հաստատված «ՀՀ քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2016 թվականի ուսուցման ծրագրի» հիման վրա իրականացվել է ՀՀ քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստում:

Քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց ուսումնառությունն անցկացվել է ուսուցման 4 հատվածով: Ուսումնառության ժամկետի տևողությու-

նը, համաձայն ուսուցման ծրագրի, կազմել է 1170 ակադեմիական ժամ, որից 300-ը կազմել է դասընթացների, 20-ը՝ քննաշրջանի, 850-ը՝ փորձաշրջանի ժամաքանակը:

Դասընթացները կազմակերպվել են 2 խմբով՝ 01.03-16.12.2016թ.:

Ուսումնառությանը մասնակցել են քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 50 անձանցից 47-ը՝ (1-ին խումբ՝ 27, 2-րդ խումբ՝ 20 ունկնդիր):

Քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանցից 3-ը դասընթացներին չեն ներկայացել, իսկ 2-ը, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի հրամաններով, հանվել են քննիչների թեկնածությունների ցուցակից (մեկը՝ 1-ին խմբից, ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 2016թ. հունիսի 6-ի հրամանով, մյուսը՝ 2-րդ խմբից, 2016թ. հոկտեմբերի 10-ի հրամանով):

Հայտով ներկայացվել է ՀՀ քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակում ընդգրկված 50 անձ, որոնցից մասնագիտական պատրաստումն ավարտել են 45-ը (26-ը՝ 1-ին, 19-ը՝ 2-րդ խմբից):

3. Հատուկ ուսուցում

• **Դատախազների հատուկ ուսուցում:** Խորհրդի 2016 թ. փետրվարի 15-ի թիվ 55-Ա որոշմամբ հաստատված «Դատախազների հատուկ ուսուցման ծրագրի» հիման վրա դատախազների հատուկ ուսուցման դասընթացներն անցկացվել են 3 խմբով՝ 1-ական օր տևողությամբ՝ 08, 15 և 22.10.2016թ.:

Հայտով ներկայացվել են 67 դատախազներ, որոնցից հատուկ ուսուցման դասընթացներին մասնակցել են 60-ը:

ՀՀ քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության քննիչները հատուկ ուսուցման դասընթացներին չեն հայտավորվել:

<u>Ընդանուր առմամբ կազմակերպվել է 911 ունկնդիրների մասնագիտական պատրաստում, վերապատրաստում կամ հատուկ ուսուցում:</u>

IV. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում գիտահետազոտական վարչությունն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

1) մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և հատուկ ուսուցման տարեկան ծրագրերի նախագծերի մշակում,
2) առարկայական ծրագրերի մշակում (դասավանդողների հետ համատեղ),
3) աշխատանքային հանդիպումների և սեմինարների ծրագրերի մշակում,
4) իրավիճակային խնդիրների կազմում, դատախաղերի կազմակերպում,
5) ուսումնական ձեռնարկների և այլ նյութերի մշակում և տպագրություն,
6) ընթացիկ այլ աշխատանքներ:

1. Մասնագիտական պատրաստման, վերապատրաստման և հատուկ ուսուցման տարեկան ծրագրերի նախագծերի մշակում

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են մասնագիտական պատրաստման 2, վերապատրաստման 7 և հատուկ ուսուցման 4 (**ընդհանուր առմամբ՝ 13**) տարեկան հետևյալ ուսումնական ծրագրերի նախագծերը՝

1) ՀՀ քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման,
2) դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման,
3) դատավորների և Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստման,
4) ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վերապատրաստման,
5) դատախազների վերապատրաստման,
6) դատական ծառայողների (այդ թվում՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակազմի) վերապատրաստման,

7) ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայողների վերապատրաստման,
8) դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստման,
9) դատական կարգադրիչների վերապատրաստման,
10) դատավորների հատուկ ուսուցման,
11) դատախազների հատուկ ուսուցման,
12) ՀՀ քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության քննիչների հատուկ ուսուցման,
13) դատական կարգադրիչների հատուկ ուսուցման:

Ուսուցման նշված ծրագրերի նախագծերը մշակելիս հիմք են ընդունվել ՀՀ Նախագահի՝ «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» 30.06.2012թ. թիվ 96-Ա կարգադրությունը, ՀՀ կառավարության՝ «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 25.09.2015թ. թիվ 1141-Ն որոշումը, ՀՀ կառավարության՝ «Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» 30.02.2014թ. թիվ 303-որոշումը, ինչպես նաև ներպետական ու միջազգային այլ իրավական ակտերը:

2. Առարկայական ծրագրերի մշակում

Խորհրդի կողմից հաստատված ուսուցման տարեկան ծրագրերի հիման վրա առարկայական ծրագրեր մշակելիս (դասավանդողների հետ համատեղ) հիմք են ընդունվել իրավունքի ոլորտում առկա զարգացումները, մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, ՀՀ Սահմանադրական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական նոր դիրքորոշումները, ինչպես նաև հանրապետությունում ընթացող դատաիրավական բարեփոխումները և իրավակիրառ պրակտիկայում առկա առավել խնդրահարույց հարցերը: Այդ կապակցությամբ իրականացվել է համապատասխան ոլորտի բազմակողմանի ուսումնասիրություն՝

նշված ծրագրերն Ակադեմիայի գործունեության նպատակներին և նրա ունկնդիրների պահանջներին առավելագույնս համապատասխանեցնելու համար:

• **Մասնագիտական պատրաստման ծրագրեր.**

Քաղաքացիաիրավական և վարչաիրավական մասնագիտացմամբ ***դատավորների թեկնածությունների*** ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ծրագրի շրջանակում մշակվել է ***6 առարկայական ծրագիր՝***

1) «Իրավաբանական գիր և մեկնաբանություն»,
2) «Սնանկության վարույթի արդի հարցերը»,
3) «ՀՀ կորպորատիվ իրավունքի արդի հարցերը»,
4) «ՀՀ մտավոր սեփականության իրավունքի արդի հարցերը»,
5) «Դատական ակտի մշակման հմտություններ»,
6) «ՀՀ աշխատանքային իրավունքի և ընտանեկան իրավունքի արդի հարցերը»:

Դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ծրագրի շրջանակում մշակվել է ***12 առարկայական ծրագիր՝***

1) «Իրավաբանական գիր»,
2) «ՄԻԵԴ իրավաբանության հիմունքները և արդի միտումները»,
3) «Փորձաքննությունների նշանակման և դրանց արդյունքների գնահատման արդի հարցերը»,
4) «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը»,
5) «Մինչդատական վարույթի ընթացքում դատախազական գործառույթների իրացման հմտությունները»,
6) «Դատարանում մեղադրանքի պաշտպանության հմտություններ»,
7) «Կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի արդի հարցերը»,
8) «Կիբերհանցագործությունների դեմ պայքարի արդի հարցերը»,
9) «Քրեական վարույթով միջազգային փոխօգնության արդի հարցերը»,
10) «Պատիժների կիրառման նկատմամբ դատախազական հսկողության արդի հարցերը»,
11) «ՀՀ ընդհանուր վարչական իրավունքի հիմունքները»,

12) «Պետական շահերի պաշտպանության արդի հարցերը»:

ՀՀ քննչական կոմիտեի ***քննիչների թեկնածությունների*** ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ծրագրի շրջանակում մշակվել է ***5 առարկայական ծրագիր***՝

1) «Փորձաքննությունների նշանակման և դրանց արդյունքների գնահատման արդի հարցերը»,
2) «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը»,
3) «Կրիմինալիստիկական տակտիկայի արդի հարցերը»,
4) «Կրիմինալիստիական մեթոդիկայի արդի հարցերը»,
5) «Քաղաքացիական իրավունքի վերաբերելի հարցերը»:

Դատախազների և ՀՀ քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ծրագրի շրջանակում մշակվել է ***3 համատեղ առարկայական ծրագիր***՝

1) «ՀՀ սահմանադրական իրավունքի գիտության և սահմանադրական արդարադատության արդի հարցերը»,
2) «ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը»,
3) «ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով»:

Քաղաքացիական և վարչական մասնագիտացմամբ դատավորների, ինչպես նաև դատախազների, ՀՀ քննչական կոմիտեի քննիչների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ուսուցման ծրագրերում ընդգրկելու նպատակով մշակվել է ***1 առարկայական ծրագիր***՝ «Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերը» վերտառությամբ:

Մասնագիտական պատրաստման ծրագրի շրջանակում ընդհանուր առմամբ մշակվել է առարկայական 27 ծրագիր:

- **Վերապատրաստման ծրագրեր.**

Դատավորների և Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց տարեկան վերապատրաստման ծրագրի շրջանակում մշակվել է ***22 առարկայական ծրագիր***՝

1) «Իրավական մեկնաբանման հարցերը»,

2) «Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդի հարցերը»,
3) «ՀՀ պարտավորական իրավունքի արդի հարցերը»,
4) «ՄԻԵԴ նախադեպային իրավունքը սեփականության իրավունքի պաշտպանության ոլորտում»,
5) «ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցերը»,
6) «ՀՀ սեփականության իրավունքի արդի հարցերը»,
7) «ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցերը»,
8) «Արբիտրաժի և վեճերի այլընտրանքային լուծման այլ եղանակների արդի հարցերը»,
9) «Սնանկության վարույթի արդի հարցերը»,
10) «ՀՀ ժառանգական իրավունքի արդի հարցերը»,
11) «ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը վարչական գործերով»,
12) «ՀՀ վարչական դատավարության արդի հարցերը»,
13) «ՀՀ վարչական վարույթի արդի հարցերը»,
14) «Ստուգումների և ուսումնասիրությունների կազմակերպման և անցկացման արդի հարցերը Հայաստանի Հանրապետությունում»,
15) «Դատական ակտերի հարկադիր կատարման վարույթի արդի հարցերը Հայաստանի Հանրապետությունում»,
16) «ՀՀ մաքսային իրավունքի արդի հարցերը»,
17) «ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով»,
18) «Անչափահասների մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունները»,
19) «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը»,
20) «ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը»,
21) «Դատական վերանայման հարցերը համաձայն ՀՀ քրեադատավարական նոր օրենսդրության»,
22) «ՀՀ ընդհանուր իրավասության դատարանի գործառույթները՝ համաձայն քրեադատավարական նոր օրենսդրության»:

Դատավորների և Ակադեմիայում ուսումնառությունն ավարտած ու դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց և ***դատախազների*** տա-

րեկան վերապատրաստման ծրագրի շրջանակում մշակվել է ***3 առարկայական ծրագիր՝***

1) «ՄԻԵԴ իրավաբանության հիմունքները և արդի միտումները»,
2) «Մարդու իրավունքների միջազգային իրավունքի արդի հարցերը»,
3) «Հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերը»:

Դատախազների տարեկան վերապատրաստման ծրագրի շրջանակում մշակվել է ***13 առարկայական ծրագիր՝***

1) «Դատախազի մասնագիտական էթիկա»,
2) «Ռասիզմի և խտրականության արդի հարցերը»,
3) «Փախստականների իրավունքների պաշտպանության արդի հարցերը»,
4) «ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով»,
5) «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը»,
6) «ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը»,
7) «Զինվորական հանցագործությունների որակման հարցերը ՀՀ-ում»,
8) «ՀՀ ընդանուր վարչական իրավունքի և վարչական դատավարության արդի հարցերը»,
9) «ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցերը»,
10) «Կիրառական քրեաբանության արդի հարցերը»,
11) «Դատական փորձաքննության արդի հարցերը»,
12) «Կիբերհանցագործությունների դեմ պայքարի արդի հարցերը»,
13) «Անչափահասների մասնակցությամբ վարույթի առանձնահատկությունները»:

ՀՀ քննչական կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող քննիչների տարեկան վերապատրաստման ծրագրի շրջանակում մշակվել է ***3 առարկայական ծրագիր՝***

1) «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը»,
2) «ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը»,
3) «ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով»:

ՀՀ քննչական կոմիտեի այլ քննիչների տարեկան վերապատրաստման ծրագրի շրջանակում մշակվել է ***5 առարկայական ծրագիր՝***

1) «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը»,
2) «ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը»,
3) «Դատական փորձաքննության արդի հարցերը»,
4) «Դեպքի վայրի զննության տակտիկան»,
5) «Երեխաների թրաֆիքինգի և սեռական բռնությունների դեմ քրեաիրավական պայքարի արդի հարցերը»:

ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների տարեկան վերապատրաստման ծրագրի շրջանակում մշակվել է ***4 առարկայական ծրագիր՝***

1) «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը»,
2) «ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը»,
3) «ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով»,
4) «Կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցերը»**:**

Դատական ծառայողների վերապատրաստման ծրագրի շրջանակում մշակվել է ***7 առարկայական ծրագիր՝***

1) «ՀՀ քրեական դատավարության արդի հարցերը»,
2) «ՀՀ քաղաքացիական դատավարության արդի հարցերը»,
3) «ՀՀ վարչական դատավարության արդի հարցերը»,
4) «ՀՀ հարկային մարմինների քննությանը ենթակա իրավախախտումների արդի հարցերը»,
5) «ՀՀ աշխատանքային իրավունքի արդի հարցերը»,
6) «Դատական գործավարություն»,
7) «Ֆեմիդա համակարգչային ծրագիր»**:**

Դատական ծառայողների և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի աշխատակազմի վերապատրաստման ծրագրի շրջանակում մշակվել է ***6 առարկայական ծրագիր՝***

1) «ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քրեական գործերով»,
2) «ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը քաղաքացիական գործերով»,

3) «ՀՀ քրեական իրավունքի արդի հարցերը»,

4) «ՀՀ սեփականության իրավունքի և ժառանգական իրավունքի արդի հարցերը»,

5) «ՄԻԵԴ նախադեպային իրավունքի արդի հարցերը վարչական գործերով»,

6) «Դատական ծառայության հիմնահարցերը>>:

Դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստման ծրագրի շրջանակում մշակվել է ***2 առարկայական ծրագիր՝***

1) «Դատախազությունում պետական ծառայության հարցերը և պետական ծառայողի մասնագիտական էթիկա»,

2) «Գործավարությունը դատախազությունում»**:**

Դատական ծառայողների և դատախազության աշխատակազմում պետական ծառայողների վերապատրաստման շրջանակում մշակվել է ***2 առարկայական ծրագիր՝***

1) «Հաշվապահական հաշվառման և գնումների իրականացման հիմնահարցերը»,

2) «Արխիվային գործի հիմնահարցերը»**:**

ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի պետական ծառայողների վերապատրաստման շրջանակում մշակվել է ***2 առարկայական ծրագիր՝***

1) «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում պետական ծառայության հարցերը»,

2) «Գործավարությունը և փաստաթղթաշրջանառությունը ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտում»**:**

Դատական կարգադրիչների վերապատրաստման շրջանակում մշակվել է ***1 առարկայական ծրագիր՝***«Դատական կարգադրիչների վարքաբանություն»:

Վերապատրաստման դասընթացների շրջանակում ընդհանուր առմամբ մշակվել է 70 առարկայական ծրագիր:

- **Աշխատանքային հանդիպումներ և սեմինարներ.**

Աշխատանքային հանդիպումների և սեմինարների շրջանակում մշակվել է ***2 ծրագիր՝***

1) «Դատավորի մասնագիտական էթիկա» (2-օրյա սեմինարի ծրագիր՝ նախատեսված դատավորների 7 Արդարադատության խորհրդի աշխատակազմի համար),
2) «Եվրասիական տնտեսական միության իրավունքը և դատարանի դերը դրա կայացման և զարգացման գործում» (2-օրյա սեմինարի ծրագիր՝ նախատեսված դատավորների և փաստաբանների համար):

3. Ընթացիկ այլ աշխատանքներ

• Դատավորների, քննիչների և դատախազների թեկնածությունների ցուցակներում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման շրջանակում դասավանդման արդի մեթոդների կիրառումն ապահովելու նպատակով մշակվել են իրավիճակային խնդիրներ, կազմակերպվել են դատախաղեր, այդ թվում՝ ՀՀ փաստաբանական դպրոցի հետ համատեղ:

• Դասախոսների հետ համատեղ մասնագիտական պատրաստման յուրաքանչյուր առարկայական կուրսի մասով կազմվել են քննական խնդիրներ, հարցաշարեր, ինչպես նաև ծրագրով նախատեսված դեպքերում՝ թեստեր:

• Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության «Աջակցություն Հայաստանում քրեական արդարադատության համակարգի բարեփոխումներին և պայքար վատ վերաբերմունքի և անպատժելիության դեմ» համատեղ ծրագրի շրջանակներում մշակվել և տպագրվել է ***5 ուսումնական նյութ՝***

1) «Կյանքի իրավունքին, խոշտանգումների և վատ վերաբերմունքի այլ ձևերի արգելքին առնչվող գործերի քննությունը»,
2) «Քրեական գործի քննության ընդհանուր մեթոդաբանությունը»,
3) «Խոցելի տուժողների/վկաների և կասկածյալների մասնակցությամբ գործերի քննությունը»,
4) «Մինչդատական կալանքը և քրեական գործի քննության հարակից խնդիրները»:

5) «Ապացույցների թույլատրելիությունը ՀՀ քրեական դատավարությունում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում»:

Որոշակի աշխատանք է տարվել գրադարանի գրքային ֆոնդի գույքագրման, ավելացման, սպասարկման բարելավման ուղղությամբ:

V. ՀԵՌԱՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում հեռաուսուցման վարչությունն աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

1) հեռաուսուցման փաթեթների մշակում,
2) հարակից մասնագիտական առարկաների ուսումնական նյութերի լրամշակում և այդ առարկաների դասավանդման կազմակերպում,
3) իր գործունեությանն առնչվող տարաբնույթ փաստաթղթերի մշակում,
4) ունկնդիրների կողմից հեռաուսուցման դասընթացների էլեկտրոնային գնահատման նոր գործիքակազմի ներդնում,
5) միջազգային համագործակցության ձևավորում և զարգացում:

1. Ընդհանուր տեղեկություններ

1. Հեռաուսուցման վարչության ու հրավիրված մասնագետների համատեղ ջանքերով հեռաուսուցման փաթեթների պատրաստման արևմտյան դասական մոդելների հիման վրա մշակվել են հետևյալ առարկաների հեռաուսուցման փաթեթները՝

- ***«Կառավարչական հմտություններ»***
- ***«Փախստականների իրավունք»***

2. Հեռաուսուցման վարչությունը կազմակերպել է հետևյալ 5 հարակից մասնագիտական առարկաների ուսումնական նյութերի լրամշակումները և այդ առարկաների դասավանդումը՝

- ✓ ***«Արդարության ուսմունքներ»,***
- ✓ ***«Հաղորդակցություն և բանակցություններ»,***
- ✓ ***«Փաստարկում և հռետորիկա»,***
- ✓ ***«Ժամանակի կառավարում»,***
- ✓ ***«Ներազդման հոգեբանություն»:***

Համապատասխան ժամկետներում կիրառական «տեսքի» են բերվել թվարկված հարակից մասնագիտական առարկաների գծով վերապատրաստողների (ուսուցանողների) ներկայացրած ձեռնարկներն ու թեստերը:

3. Հարակից մասնագիտական առարկաների գծով կազմակերպվել է հետևյալ թիրախային խմբերի ուսուցումը՝

ա/ դատախազի թեկնածուներ *(«Փաստարկում և հռետորիկա», «Արդարության ուսմունքներ», «Ժամանակի կառավարում», «Հաղորդակցություն և բանակցություններ», «Ներազդման հոգեբանություն»)*,

բ/ քննիչների թեկնածուների I և II-րդ խմբեր *(«Փաստարկում և հռետորիկա», «Ներազդման հոգեբանություն»)***,**

գ/ քաղաքացիական և վարչաիրավական մասնագիտացմամբ դատավորի թեկնածուներ *(«Փաստարկում և հռետորիկա», «Արդարության ուսմունքներ»)*:

3.1. Կազմակերպվել է նաև ***դատական ծառայողների*** *(23 խումբ, որոնցից 23-ը վերապատրաստվել են «Ժամանակի կառավարում», իսկ 3-ը՝ նաև «Կառավարչական հմտություններ» հարակից մասնագիտական առարկաների գծով)* և ***դատախազության աշխատակազմի*** *(2 խումբ՝ «Ժամանակի կառավարում» առարկայի գծով)* վերապատրաստումը:

4. Մշակվել են նաև հեռաուսուցմանն առնչվող տարաբնույթ փաստաթղթեր, որոնք հիմնականում միտված են եղել հեռաուսուցման փաթեթների ներդրման գործընթացի տարբեր կողմերի գնահատմանը, հնարավոր թերությունների վերհանմանը և այդ գործընթացի արդյունավետության շարունակական բարձրացմանը:

5. Նախաձեռնվել է ունկնդիրների կողմից հեռաուսուցման դասընթացների էլեկտրոնային գնահատման նոր գործիքների ներդնում:

6. Ակտիվ գործունեություն է ծավալվել միջազգային համագործակցության ուղղությամբ: Հեռաուսուցման վարչությունը ձևավորել և զարգացրել է կապերը տարբեր միջազգային հետևյալ կառույցների և կազմակերպությունների հետ՝

- ✓ ***ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հայաստանյան գրասենյակ,***
- ✓ ***ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (UNHCR) գրասենյակ,***
- ✓ ***Եվրոպայի խորհրդի «Մարդու իրավունքների կրթություն իրավական ոլորտի մասնագետների համար»՝ HELP (Human Rights Education for Legal Professionals) ծրագիր և այլն:***

2. Հեռաուսուցման դասընթացներ

Ընթացիկ տարվա սեպտեմբերի 13-ից նոյեմբերի 24-ը կազմակերպվել և իրականացվել են հեռաուսուցման հետևյալ դասընթացները՝

- ✓ ***«Կառավարչական հմտություններ և ներազդման հոգեբանություն»,***
- ✓ ***«Փախստականների իրավունք»,***
- ✓ ***«Փաստարկում և հռետորիկա»,***
- ✓ ***«Սթրեսի և ժամանակի կառավարում»:***

Վերը նշված դասընթացներին մասնակցության հայտ են ներկայացրել ***377 դատավորներ և դատախազներ,*** որոնք կոնկրետ դասընթացի շրջանակներում ապահովել են մասնակցություն՝ պատասխանելով ինքնաստուգիչ հարցերի:

Յուրաքանչյուր դասընթացի տևողությունը 10 շաբաթ էր: Մասնակցելով նշված դասընթացներից յուրաքանչյուրին՝ ունկնդիրները հնարավորություն են ունեցել անցնել 40 ակադեմիական ժամին համարժեք վերապատրաստում:

• **«Փաստարկում և հռետորիկա»** դասընթացին մասնակցելու համար ***հայտագրվել են 122 դատավորներ և դատախազներ,*** որոնցից ***միայն 2-ը չեն ապահովել*** իրենց մասնակցությունը դասերի առնվազն 80%-ին: Դա պայմանավորված է եղել օբյեկտիվ գործոններով, քանզի նրանցից մեկը, մինչ դասընթացի ավարտը, թոշակի է անցել, իսկ մյուսը՝ այլ աշխատանքի:

Դասընթացին փաստացի մասնակցել են ***40 դատավորներ և 82 դատախազներ:*** Դատավորներից ***37-ը ապահովել են 40, 2-ը՝ 36, 1-ը՝ 20 ակադեմիական ժամին*** հա-

մարժեք մասնակցություն: Այսինքն՝ դասերի առնվազն 80%-ին ***միայն մեկ դատավոր*** չի կարողացել ապահովել իր մասնակցությունը:

Դատախազներից ***58-ը ապահովել են 40, 23-ը՝ 36, իսկ 1-ը՝ 28 ակադեմիական ժամին*** համարժեք մասնակցություն: Այսինքն՝ դասերի առնվազն 80%-ին ***միայն մեկ դատախազ*** չի կարողացել ապահովել իր մասնակցությունը:

Արդյունքում, տվյալ դասընթացին 40 ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն են ապահովել ***դատավորների 93%-ը և դատախազների 71%-ը:***

Վերապատրաստվող ***դատավորները*** (միջինացված տարբերակով) 100 ինքնաստուգիչ հարցերից ճիշտ պատասխանել են ***86.3-ին,*** իսկ ***դատախազները՝ 82.4-ին: Դատավորներից միայն 4-ը, իսկ դատախազներից միայն 2-ն են, որ ապահովել են 100%-անոց արդյունք՝*** ճիշտ պատասխանելով բոլոր ինքնաստուգիչ հարցերին: 24 դատավոր (դասընթացին մասնակցած դատավորների 60%-ը) և 34 դատախազ (դասընթացին մասնակցած դատախազների 41%-ը) ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի 90-100%-ին, իսկ 4 դատավոր (դասընթացին մասնակցած դատավորների 10%-ը) և 8 դատախազ (դասընթացին մասնակցած դատախազների 9.8 %-ը) ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի 50%-ից պակասին:

• **«Փախստականների իրավունք»** դասընթացին մասնակցելու համար ***հայտագրվել են 10 դատավորներ, որոնք ապահովել են 40 ակադեմիական ժամին համարժեք մասնակցություն:*** Դասընթացի շրջանակներում վերապատրաստվող դատավորները (միջինացված տարբերակով) 100 ինքնաստուգիչ հարցերից 76.7%-ին: Ոչ մի դատավոր ***չի կարողացել ապահովել ճիշտ պատասխանների 100%-անոց արդյունք:*** Վերապատրաստվող դատավորներից ***միայն երկուսի*** ներկայացրած ճիշտ պատասխաններն են եղել ***90-100%-ի միջակայքում,*** իսկ ***երկուսն էլ*** ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***50%-ից պակասին:***

• **«Սթրեսի և ժամանակի կառավարում»** հեռաուսուցման դասընթացին մասնակցելու համար ***հայտագրվել են 70 դատավորներ և դատախազներ,*** որոնք բոլորը մասնակցել են հեռաուսուցման դասընթացի առնվազն 80%-ին:

Դասընթացին փաստացի մասնակցել են ***39 դատավոր և 31 դատախազ:*** Դատավորներից ***35-ը ապահովել են 40, 3-ը՝ 36, 1-ը՝ 32 ակադեմիական ժամին*** համարժեք

մասնակցություն: Դատախազներից ***30-ը ապահովել են 40, 1-ը՝ 36 ակադեմիական ժամին*** համարժեք մասնակցություն:

Արդյունքում, տվյալ դասընթացին ***40 ակադեմիական ժամին*** համարժեք մասնակցություն են ապահովել ***դատավորների 90%-ը և դատախազների 97 %-ը:***

Վերապատրաստվող ***դատավորները*** (միջինացված տարբերակով) 100 ինքնաստուգիչ հարցերից ճիշտ պատասխանել են ***85-ին,*** իսկ ***դատախազները՝ 79.3-ին:*** Ինչպես դատավորների, այնպես էլ դատախազների թվում չեն եղել 100%-անոց արդյունք ապահովողներ՝ ինքնաստուգիչ բոլոր հարցերին ճիշտ պատասխանողներ:

17 դատավոր (դասընթացին մասնակցած դատավորների 44%-ը) և ***12 դատախազ*** (դասընթացին մասնակցած դատախազների 39%-ը) ***ճիշտ են պատասխանել*** ինքնաստուգիչ հարցերի ***90-100%-ին,*** իսկ ***1 դատավոր*** (դասընթացին մասնակցած դատավորների 3%-ը) և ***5 դատախազ*** (դասընթացին մասնակցած դատախազների 16%-ը) ***ճիշտ են պատասխանել*** ինքնաստուգիչ հարցերի ***50 %-ից պակասին:***

• **«Կառավարչական հմտություններ և ներազդման հոգեբանություն»** դասընթացին մասնակցելու համար ***հայտագրվել են 175 դատավորներ և դատախազներ,*** որոնք բոլորը մասնակցել են հեռաուսուցման դասընթացի առնվազն 80%-ին:

Դասընթացին փաստացի մասնակցել են ***54 դատավորներ և 121 դատախազներ:*** Դատավորներից ***46-ը ապահովել են 40, 8-ը՝ 36 ակադեմիական ժամին*** համարժեք մասնակցություն: Դատախազներից ***97-ը ապահովել են 40, 22-ը՝ 36, 2-ը՝ 32 ակադեմիական ժամին*** համարժեք մասնակցություն:

Աարդյունքում, տվյալ դասընթացին ***40 ակադեմիական ժամին*** համարժեք մասնակցություն են ապահովել ***դատավորների 85%-ը և դատախազների 80%-ը:***

Վերապատրաստվող ***դատավորները*** (միջինացված տարբերակով) 50 ինքնաստուգիչ հարցերից ***ճիշտ պատասխանել են 39-ին,*** իսկ ***դատախազները՝ 38.1-ին:***

Դատավորներից երկուսը ապահովել են ***100%-անոց արդյունք***՝ ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ բոլոր հարցերին: ***Դատախազների*** պարագայում նման ցուցանիշներ ***չեն արձանագրվել:***

16 դատավորներ (դասընթացին մասնակցած դատավորների 30%-ը) և ***45 դատախազներ*** (դասընթացին մասնակցած դատախազների 37%-ը) ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***90-100%-ին,*** իսկ ***6 դատավորներ*** (դասընթացին մաս-

նակցած դատավորների 11%-ը) և ***16 դատախազներ*** (դասընթացին մասնակցած դատախազների 13%-ը) ճիշտ են պատասխանել ինքնաստուգիչ հարցերի ***50%-ից պակասին:***

3. Ընդհանրացված ամփոփում

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայում ***«Կառավարչական հմտություններ և ներազդման հոգեբանություն», «Փախստականների իրավունք», «Փաստարկում և հռետորիկա», «Սթրեսի և ժամանակի կառավարում»*** հեռաուսուցման դասընթացների շրջանակներում ***վերապատրաստվելու հայտ են ներկայացրել 377 դատավորներ և դատախազներ*** (143 դատավոր և 234 դատախազ), որոնցից ***375-ը բավարարել են*** վերապատրաստված համարվելուն ներկայացվող պահանջին, այն է՝ մասնակցել են կոնկրետ հեռաուսուցման դասընթացի առնվազն 80%-ին: ***Մեկ դատավորի և մեկ դատախազի*** պարագայում այդ մասնակցության ցուցանիշն ավելի ցածր է, ինչը պայմանավորված է այդ մասնակցության ընդհատմամբ (դատավորը թոշակի է անցել, իսկ դատախազը՝ այլ աշխատանքի):

Հեռաուսուցմանն ինչպես դատավորների, այնպես էլ դատախազների մասնակցության աստիճանը եղել է բարձր: Դասընթացներին մասնակցած ***143 դատավորների առնվազն 90.5%-ն ապահովել է 40 ակադեմիական ժամ*** մասնակցություն, իսկ ***234 դատախազների պարագայում այդ ցուցանիշը 82.6% է:***

VI. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

1. Եկամուտներ

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմայի նախահաշվով նախատեսվել են եկամուտների հետևյալ աղբյուրները՝

1) Վերադաս մարմնի կողմից դրամաշնորհի ձևով ստացվող եկամուտներ՝ 253434.4 հազ. դրամ՝ «վերապատրաստման ծառայություններ» ծրագրով,
2) «Մասնագիական վերապատրաստում ստացող ունկնդիրների կրթաթոշակ>> ծրագրով՝ 64620.0 հազ. դրամ,
3) «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ և ՀՀ քննչական կոմիտեի միջև կնքված «Վերապատրաստման և մասնագիտական պատրաստման ուսուցման ծառայությունների մատուցման պետական գնման» թիվ ԲԸԱՀ-ՀՀՔԿԴ-16/ՎՊ պայմանագրի շրջանակերում՝ 12408,92 հազ. դրամ,
4) «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ և ՀՀ հատուկ քննչական ծառայության միջև 01.03.2016թ. կնքված «Վերապատրաստման ծառայությունների մատուցման պետական գնման» թիվ 1 պայմանագրի շրջանակներում ՝600,0 հազ. դրամ,
5) «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ և Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի միջև կնքված թիվ UNHCR/ARM01/2016/Pillar/0000000112/000 պայմանագրի շրջանակներում՝ 9595,0 հազ. դրամ:
6) ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ միջև 2016 թվականի սեպտեմբերի 5-ին կնքված թիվ N ՄԻՊԱ-ԾՁԲ-26 պայմանագիրի շրջանակներում՝ 320.0 հազ. դրամ:

Տարվա սկզբին ֆինանսական միջոցների առկա ***մնացորդը կազմել է 110700.8 հազ. դրամ: Հունվարից դեկտեմբեր*** ամիսների ընթացքում բանկային տոկոսներից հաշվեգրված ***եկամուտը կազմել է 1496.3 հազ. դրամ:***

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և փոփոխություններ, ինչպես նաև Հա-

յաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 2016 թվականի հուլիսի 7-ի N 724-Ն ***(որով Ակադմիայի տարեկան բյուջեն կրճատվել է 209 400 ՀՀ դրամով)*** և 2016 թվականի հուլիսի 21-ի ՀՀ կառավարության N 757-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի N 1 հավելվածում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 24-ի N 1555-Ն որոշման N 5 հավելվածում կատարվող փոփոխությունները, Ակադեմիայի բյուջեն կրճատվել է 5349,8 հազ. դրամով:

2. Ծախսեր

2016 թվականին Ակադեմայի նախահաշվով նախատեսվել են ծախսերի հետևյալ ուղղությունները.

հազ. դրամ

ԾԱԽՍԵՐ	447581,3
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	**445791,3**
Աշխատանքի վարձատրություն	**173071,5**
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	159675,04
Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ	13396,50
Կրթաթոշակ	**64620,0**
Պայմանագրային ծառայություններ, վերապատրաստման ծախսեր	**81671,6**
Քննությունների ստուգման և գնահատման ծառայություններ	8800,00
Բանկային ծառայությունների ծախսեր	100,00
Էներգետիկ ծառայություններ	3913,14
Ջեռուցման ծառայություններ	4003,57
Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ	1249,60
Հեռախոսակապի ծառայություններ	708,20
Փոստային կապի ծառայություններ	100,00
Ինտերնետ ցանի մուտքի ապահովման ծառայություններ	576,00
Վերապատրաստվողների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	2732,40
Վերապատրաստվողների սննդի ծախսերի փոխհատուցում	14088,00
Դատական կարգադրիչների, դատախազների և դատավորների հատուկ ուսուցման ծառայություններ	12000,00
Կանոնավոր օդային փոխադրման /ավիատոմս/ ծառայություն	1000,00
Տպագրական աշխատանքներ	4388,40
Տեսաձայնագրման ծառայություններ	900,00
Աղբահեռացման ծառայություններ	254,4

Մասնագիտական ծառայություններ՝ այդ թվում ջեռուցման կայանների վերանորոգման և տեխնիկական սպասարկման, կաթսայի տեխնիկական անվտանգության և փորձաքննության ծառայություններ	694,00
Ուղևորափոխադրման ծառայություններ	2240,00
Անկախ աուդիտորական ծառայություն	1000,00
ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վերապատրաստման ծառայություններ	**600,00**
ՀՀ քննչական կոմիտեի քննիչների և պետական ծառայողների վերապատրաստման, ինչպես նաև թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման ծառայություններ	**12408,92**
Հեռաուսուցման ձևաչափով վերապատրաստման դասընթացների և փաթեթների մշակում ու ներդրում	**9595,00**
ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի աշխատակիցների վերապատրաստման ծախսեր	**320,00**
Ներկայացուցչական ծախսեր	**2000,0**
Գործուղումներ	**1000,0**
Այլ մասնագիտական ծառայությունների ձեռքբերում	**6000,0**
Պահնորդային ծառայություն	6000,0
Ընթացիկ նորոգում և պահպանում (ծառայություններ և նյութեր)	**2000,0**
Համակարգչային սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ	1000,00
Տրանսպորտային սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	1000,00
Ընդհանուր բնույթի այլ ծախսեր	3697,1
Նյութեր	**2622,9**
Գրասենյակային նյութեր	238,8
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	715,5
Շինարարական նյութեր	365,6
Համակարգչային նյութեր	163,0
Տրանսպորտային նյութեր	1140,0
Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	**1790,0**
1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ	1790,0
Վարչական սարքավորումներ	1790,0
Հարկեր, այլ պարտադիր վճարներ և տույժեր	**658,8**
Վերադարձի համար նախատեսված գումար	**108449,40**
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**447581,2**

2014 և 2015 թթ. ընթացքում դրամաշնորհի ձևով ստացված, սակայն չօգտագործված և կուտակված միջոցները 108449.4 հազ դրամի չափով վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:

VII. ԱՅԼ ՈԼՈՐՏՆԵՐ

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայում աշխատանքներ են իրականացվել նաև հետևյալ ուղղություններով՝

1) Ակադեմիան ՀՀ արդարադատության խորհրդի կողմից ընտրվել է որպես դատավորների թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման ստուգման գրավոր քննության համար քննական հարցերի մշակման պատասխանատու կազմակերպություն.
2) Ակադեմիայի և ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի միջև համագործակցությունն իրավական հիմքերի վրա է դրվել՝ փողերի լվացման ու ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին ուղղված համատեղ ծրագրեր մշակելու և իրականացնելու նպատակով 2016թ. նոյեմբերի 12-ին ստորագրվել է փոխըմբռնման համաձայնագիր.
3) լրամշակվել և կատարելագործվել է Ակադեմիայի համացանցային պաշտոնական կայքէջը.
4) բարելավվել են Ակադեմիայի արխիվային և հյուրանոցային տնտեսությունները.
5) Ակադեմիայի հարակից հողային տարածքները կանաչապատվել են հայկական բնակլիմայական պայմաններին համապատասխանող հատուկ խոտաբույսերով՝ շուրջ 100 մ^2 մակերեսով.
6) կատարվել է ծառատունկ՝ թվով 16 դեկորատիվ «Տույա» և «Ակացիա» կոչվող ծառատեսակներով.
7) անցկացվել է ոռոգման ջրի խողովակացանց՝ 150 գ/մ երկարությամբ.
8) իրականացվել են կապիտալ և ընթացիկ վերանորոգման, ասֆալտապատման աշխատանքներ, համապատասխանաբար՝ 60 մ^2 և 80 մ^2 մակերեսներով.
9) ասֆալտապատման աշխատանքների արդյունքում ակադեմիայի դիմային մասը՝ ՃՈ-ի կողմից հատուկ գծանշումից հետո, թվով 12 մարդատար մեքենայի համար ապահովված է ավտոկայանատեղերով, բակային տարածքի ավտոկայանատեղերի թիվն ավելացվել է ևս 4-ով.
10) Ակադեմիայի առաջին հարկում տեղադրվել է Ակադեմիայի խորհրդանիշը համարվող 2,5 մ բարձրությամբ տուֆակերտ արձանը.

11) հիմնովի նորացվել է ակադեմիայի շենքի արտաքին լուսավորումը, տեղադրվել են ժամանակակից լուսադիոդային տնտեսող լամպեր և լապտերներ, ինչի արդյունքում գրանցվել է էլեկտաէներգիայի զգալի խնայողություն.
12) Ակադեմիայի կենտրոնական մուտքից ներս տեղադրվել է անցակետային հսկողության էլեկտրոնային սարք (հաճախումների կառավարման համակարգ), որը զգալիորեն նպաստել է աշխատակիցների և ունկնդիրների հաճախելիության կարգապահության բարձրացմանը.
13) հստակեցվել են Ակադեմիայում հանրային սննդի ծառայություններ մատուցող ընկերության հետ պայմանագրային հարաբերությունները: